

# COVID-19 Ուղևորությունների Սահմանափակումներ

## 1. Որո՞նք են Լոս Անջելեսի Շրջանի ճամփորդելու կանոնները:

2020թ.-ի Դեկտեմբերի 29-ից սկսած Առողջապահության Պատասխանատուի նոր Հրամանը (HOO) պահանջում է, որ ճանապարհորդները, ովքեր գալիս են Լոս Անջելեսի Շրջան՝ Հարավային Կալիֆորնիայի Շրջանից դուրս գտնվող տարածքից, այստեղ հասնելուց հետո 10 օր տևողությամբ ինքնակարանտին պահպանեն տանը կամ այլ բնակավայրում: Սա նշանակում է, որ վարչաշրջան ժամանող մարդիկ պետք է մնան տանը (կամ հյուրանոցում կամ հանրակացարանում կամ այլ բնակավայրում) առանց այն լքելու: Այդ ընթացքում նրանք պետք է խուսափեն բոլոր այն անձանց հետ շփումներից, որոնք իրենց ընտանիքի մաս չեն կազմում: Այն նաև պահանջում է, որ ժամանող ճանապարհորդները հետևեն իրենց COVID-19 հիվանդության ցանկացած ախտանիշ հայտնաբերելու համար ժամանելուց հետո ամբողջ 14 օրերի ընթացքում, որպեսզի համոզվեն, որ իրենք հիվանդ չեն և COVID-19-ի տարածման վտանգ չեն ներկայացնում:

## 2. Ու՞մ է վերաբերում Հրամանը:

Հրամանը վերաբերում է ճանապարհորդների մեծ մասին.

- Հրամանը կիրառվում է, անկախ նրանից, թե ճանապարհորդը մուտք է գործում մեքենայով, գնացքով, ավտոբուսով, ինքնաթիռով կամ տրանսպորտային ցանկացած այլ միջոցով:
- Հրամանը կիրառվում է անկախ նրանից, թե ճանապարհորդը Լոս Անջելես Շրջանի բնակիչ է, որը գալիս է տուն, կամ այցելու է ԱՄՆ-ի այլ վայրից կամ այլ երկրից:
- Հրամանը գործում է անկախ նրանից, թե ճանապարհորդը հիվանդության որևէ նշան է ունեցել կամ տեղյակ է COVID-19-ին ենթարկվելուն իր ճանապարհորդությունից առաջ կամ դրա ընթացքում:

## 3. Ո՞վ է ազատվում Հրամանից:

Չնայած Հրամանը վերաբերում է ճանապարհորդների մեծ մասին, այն չի վերաբերում բոլորին.

- Հրամանը չի վերաբերում այն մարդկանց, ովքեր Լոս Անջելեսի Շրջան են գալիս Հարավային Կալիֆորնիայի տարածաշրջանից: Տարածաշրջանն ընդգրկում է Իմպերիալ, Ինյո, Մոնո, Օրինջ, Ռիվերսայդ, Սան Բերնարդինո, Սան Դիեգո, Սան Լուիս Օբիսպո, Սանտա Բարբարա, և Վենտուրա Շրջանը, ինչպես նաև Լոս Անջելեսի Շրջանը: Այս շրջաններից որևէ մեկից Լոս Անջելեսի Շրջան եկող մարդիկ ստիպված չեն կարանտին պահպանել:
- Հրամանը չի վերաբերում այն անձանց, ովքեր այցելում են Շրջան՝ բացառիկ հիմնական աշխատանք կատարելու նպատակով: Սա ներառում է.
  - Լիցենզավորված առողջապահության մասնագետներ և սուր խնամքի հիվանդանոցներում աշխատող մարդիկ:
    - Օրինակ՝ տեղական հիվանդանոցում բուժօգնություն ցուցաբերելու համար Լոս Անջելես ժամանող շրջիկ բուժքույրը ստիպված չի լինի կարանտին պահպանել:
  - Մարդիկ, ովքեր գալիս են այստեղ էական կառավարական գործառույթներ կատարելու համար:
    - Օրինակ, կրթական ոլորտի փորձագետը, որն այստեղ է բերվել դպրոցական շրջանի հետ աշխատելու համար, այդ դպրոցական շրջանի կողմից կարող է սահմանվել որպես հիմնական աշխատող:
  - Պետության կողմից որպես որպես հիմնական աշխատող սահմանվողների ամբողջական ցուցակի համար այցելեք [Հիմնական աշխատող COVID-19 Կորոնավիրուսի Արձագանք \(ca.gov\)](https://www.ca.gov):
- Հրամանը չի վերաբերում այն մարդկանց, ովքեր ճանապարհորդում են Լոս Անջելեսի Շրջանի միջով և չեն գիշերում:

# COVID-19 Ուղևորությունների Սահմանափակումներ

- Օրինակ՝ LAX-ում վայրէջք կատարող մեկը, ով անմիջապես մեքենա է վարձում Սանտա Բարբարա գնալու համար, Լոս Անջելեսի Շրջանում չպետք է կարանտին անցկացնի:
- Կան նաև մարդիկ, ովքեր **ազատված չեն** Հրամանից, բայց կարող են լքել իրենց բնակավայրը միայն աշխատանքի գնալու համար:
  - Սա կարող է ներառել այն մարդկանց, ովքեր գալիս են Լոս Անջելես՝ աշխատելու մասնավոր ընկերությունում, որը կատարում է էական, կարևոր ենթակառուցվածքային աշխատանք և ունի անձնակազմի խիստ պակաս:
    - Օրինակ՝ մի թիմին, որն այստեղ էր եկել համալրելու էլեկտրակայանը, որը աշխատակազմի պակաս ուներ COVID-19 բռնկման պատճառով, կարող էր թույլատրվել լքել իրենց հյուրանոցը՝ գործարան մեկնելու համար, բայց այլ տեղ գնալ չէր թույլատրվի:

**4. Կարանտինի ժամանակահատվածը առաջարկություն է, թե՞ պահանջ: Արդյո՞ք այն օրենքի ուժ ունի:**  
Այս Հրամանը, ինչպես Առողջապահության Պատասխանատուի այլ Հրամանները, օրենքի ուժ ունի: 10-օրյա կարանտինային շրջանը պարզապես առաջարկ Չէ. այն պահանջ է:

**5. Ինչո՞ւ են անհրաժեշտ այս նոր սահմանափակումները:**

Նոր Հրամանը հասկանալու համար հարկավոր է հասկանալ երկու բան.

- Նախ, Լոս Անջելեսի Շրջանը ներկայումս ապրում է երբևէ ամենաբարձր նոր COVID-19 վարակների, հոսպիտալացման և մահվան դեպքերի մակարդակը: Սա ստեղծեց շատ վտանգավոր իրավիճակ մեր հիվանդանոցներում, որոնք պետք է ունենան բավարար մահճակալներ COVID-19 նոր հիվանդների և այլ հիվանդ մարդկանց համար, և ինտենսիվ թերապիայի բաժանմունքներում (ICU-ներ) բավարար մահճակալներ՝ ամենածանր հիվանդներին խնամելու համար: Մենք անցել ենք այն կետը, երբ հիվանդանոցները կարող էին հավաստիացնել, որ կա ICU մահճակալ յուրաքանչյուրի համար, ով դրա կարիքն ունի: Փաստորեն, դա վերաբերում է ամբողջ Հարավային Կալիֆոռնիայի տարածաշրջանին, ուստի Լոս Անջելեսի հիվանդանոցները չեն կարող հիվանդներին ուղարկել Ռիվերսայդ կամ Օրինջ կամ Սան Բերնարդինոյի Շրջան, երբ այստեղ մահճակալները չբավականացնեն:
- Երկրորդ, ճանապարհորդությունը վտանգ է պարունակում:
  - Այն մարդկանց շփման է ենթարկում իրենց տնից դուրս գտնվող մարդկանց հետ, երբ նրանք համատեղ տրանսպորտ կամ տաքսի են վերցնում օդանավակայան կամ ավտոբուսային կամ երկաթուղային կայարան հասնելու համար, երբ նրանք գտնվում են օդանավակայանում կամ մայրուղու հանգստի կանգառում, երբ գնում են մեքենաների վարձակալության գրասենյակ, ավտոկայանի սանհանգույց կամ երկաթուղային կայարանի տոմսարկղ: Այս բոլոր շփումները վտանգ են առաջացնում վիրուսի տարածման համար:
  - Դա կարող է մարդկանց այստեղ բերել այն վայրերից, որտեղ սոցիալական հավաքույթների մասին կանոնները անփույթ են, և որտեղ նրանք կարող են լինել մարդաշատ բարերում կամ ակումբներում, որտեղ վիրուսը տարածվում է անվերահսկելիորեն: Եթե նրանք եղել են ԱՄՆ-ից դուրս, հնարավոր է, որ նրանք վերցրել են COVID-19 վիրուսի նոր շտամներ, որոնք նոր վտանգներ են ներկայացնում մեզ համար:

Ճանապարհորդությունը կարևոր է Լոս Անջելեսի շատ բնակիչների համար, բայց ներկայիս պայմաններում կարանտինի ժամանակահատվածը միակ միջոցն է՝ ապահովելու համար, որ այն Շրջանին մահացու նոր վտանգներ չի բերի: Իրականում, ճանապարհորդության անվտանգ լինելու ժամանակին հասնելու լավագույն միջոցը տանը մնալն է:

**6. Որտեղի՞ց կարող եմ ավելի շատ տեղեկություններ ստանալ HOO-ի և դրա պահանջների մասին:**

# COVID-19 Ուղևորությունների Սահմանափակումներ

- Առողջապահության Պատասխանատուի Հրամանի տեքստը կարող եք գտնել այստեղ՝ [http://publichealth.lacounty.gov/media/Coronavirus/docs/HOO/HOO\\_SaferatHome\\_SurgeResponse.pdf](http://publichealth.lacounty.gov/media/Coronavirus/docs/HOO/HOO_SaferatHome_SurgeResponse.pdf)
- Պետական կանոնակարգերը, որոնք, ընդհանուր առմամբ, համապատասխանում են HOO-ին, կարող եք գտնել այստեղ՝ <https://covid19.ca.gov/stay-home-except-for-essential-needs/#regional-stay-home-order>
- Կարանտինի մասին մանրամասները կարող եք գտնել այստեղ՝ [ph.lacounty.gov/covidquarantine](http://ph.lacounty.gov/covidquarantine)
- COVID-19-ի ախտանիշների ամբողջական ցանկը կարող եք գտնել այստեղ՝ [ph.lacounty.gov/covidcare](http://ph.lacounty.gov/covidcare)